**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա**

ք.Երևան

«13» 02 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Զատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Լոռու մարզի Սպիտակ համայնքը ի դեմս համայնքի ղեկավար Գ. Սահակյանի և <<Բիդեք>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քրբր Քրբրոոյան և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 40 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները՝ Կապալառուն շին. աշխատանքների ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի և շինվածքների համար, պատվիրատուին պետք է ներկայացնի դրանց հավաստագիրը, որոնք պետք է պարունակեն բոլոր անհրաժեշտ տվյալները նրանց ծագման ու որակի և համապատասխանեն ընդունված ստանդարտների պահանջներին: Ներկայացվող նյութերը և շինվածքների որակը, արտաքին տեսքը պետք է համաձայնեցվի պատվիրատուի և նախագծողի հետ:

Երաշխիքային ժամկետը կազմում է 5 /հինգ/ տարի:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով

թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 25 707 000 (քսանհինգ միլիոն յոթ հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ, որից 4 284 500 (չորս միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի ընդհանուր գնից 19 280 250 (տասնինը միլիոն երկու հարյուր ութսուն հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը վճարում է Ջրային կոմիտեն և 6 426 750 (վեց միլիոն չորս հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ Սպիտակի համայնքապետարանը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում

է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|---|
| Ջրային կոմիտե | ՀՀ Լոռու մարզի | <<Բիդեք>> ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա | Սպիտակ համայնք | ք. Երևան, Նեկրասովի 86 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ | Էլ.փոստ info@bedeck.am |
| Հ/Հ | ք. Սպիտակ | Հ/Հ 15700 15 55 99 20 100 |
| ՀՎՀՀ 02555816 | Համայնքի ղեկավար | ՀՎՀՀ 00450801 |
| Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար | | Հեռ. +374 11 57 55 22, +374 93 10 55 22 |
| | | Տնօրեն |
| Ա. ՋԱՏԻԿՅԱՆ | Գ. ՄԱՀԱԿՅԱՆ | Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ. Տ. | Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*. 13 փետրվարի 2019թ. կնքված*
*ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## .ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ ԵՎ ԱՅԳԵՍՏԱՆ 2 ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN ը/կ | Հիմնա վորում | Աշխատանքի անվանումը | Չափ. միավ. | Քանակ | 1 միավ. ընդ.արժ. հազ.դր. | Ընդհանուր արժեքը հազ.դր. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | Արտաքին կոյուղի/Քըրքորյան - 1 / | | | | |
| 1 | 1-58, | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ$^3$ | 0.213 | 804.24 | 171.30 |
| 2 | 1-965 | Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի | մ$^3$ | 21.3 | 4.8 | 102.28 |
| 3 | 27-19 | Նախապատ. շերտ ավազից | մ$^3$ | 18 | 3.95 | 71.12 |
| 4 | 27-19 | Խողովակի վրայի շերտ ավազից | մ$^3$ | 56 | 3.95 | 221.25 |
| 5 | 1-1635 | Բնահողի հետլիցք մեխանիզմով | 1000մ$^3$ | 0.1117 | 83.13 | 9.29 |
| 6 | 1-1593 | Ավելորդ բնահողի բարձում ինքնաթ.էքսկավատորով | 1000մ$^3$ | 0.1246 | 724.03 | 90.21 |
| 7 | Գ-310-5 | Տեղափոխում 5 կմ | տն | 211.8 | 1.66 | 352.13 |
| 8 | 22-121 | Պոլիվինիլքլորիդե խողովակի d =160 մմ կոյուղու համար SN 4 | մ | 164 | 3.83 | 628.12 |
| 9 | 22-122 | Պոլիվինիլքլորիդե խողովակի d =200 մմ կոյուղու համար SN4 | մ | 73 | 6.48 | 472.68 |
| 10 | 27-20 | Ճանապարհային ծածկույթի վերականգնում ավազակոպճային խառնուրդով /տոփանումով/20սմ հաստությամբ | մ$^3$ | 48.6 | 3.6 | 174.99 |
| 11 | 11-6. | Խճի նախաշերտի կառուցում 100մմ | մ$^3$ | 1.2 | 13.52 | 16.23 |
| 12 | 6-2. | Հորի հիմքի հիմնատակի կառուցում Վ - 7.5 բետոնից | մ$^3$ | 2 | 54.98 | 109.96 |
| 13 | 22-446 | Դիտահորի կառուց. հավաք. ե/բ օղակներից | մ$^3$ | 2.16 | 37.47 | 80.93 |
| 14 | Շուկա | Ե/ Բ Դիտահոր 1000 մմ | հատ | 9 | 34.76 | 312.85 |
| 15 | 22-446 | Դիտահորի ծածկ. հավաք. ե/բծածկի էլեմենտ. | մ$^3$ | 1.12 | 37.47 | 41.96 |
| 16 | ինֆ տեղ | Ե/ Բ Կափարիչ 1200*1200 մտոցով | հատ | 8 | 92.69 | 741.52 |
| 17 | 16-57 | Ասֆալտ/բետ.ծածկույթի քանդում | մ$^3$ | 0.3 | 4.54 | 1.36 |
| 18 | 23-227 | Շին.աղբի հավաքում,տեղափոխում և բարձում | տն | 0.6 | 0.54 | 0.32 |
| | | ինքնաթափին | | | | |
| 19 | Գ-310 - 5 | Տեղափոխում 5 կմ | տն | 0.6 | 2.66 | 1.60 |
| 20 | 27-42 | Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ. 20-40 մմ | 100մ$^2$ | 0.04 | 146.72 | 5.87 |
| 21 | 27-251 | Բիտումի տարածում 4.12տն/ 1000մԱ | տն | 0.0165 | 255.74 | 4.22 |
| 22 | 27-164-1 | Ծածկի ներքին շերտի իրականացում H=6սմ | 100մ$^2$ | 0.04 | 466.79 | 18.67 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 27-165-1 | խոշորահատիկ ա/բետոնե խառնուրդից | | | | |
| 23 | 27-164-2 | Ծածկի վերին շերտի իրականացում H=3սմ | 100մ² | 0.04 | 255.88 | 10.24 |
| | 27-165-2 | «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից | | | | |
| | | Արտաքին կոյուղի/Քըրքորյան -2/ | | | | |
| 1 | 27-95 k=0,5 | Ճանապարհի բետոնե սալերի ապամոնտաժում | մ³ | 44.1 | 4.14 | 182.62 |
| 2 | 1-58, | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.3075 | 804.24 | 247.30 |
| 3 | 1-965 | Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի | մ³ | 31 | 4.8 | 148.85 |
| 4 | 27-19 | Նախապատ. շերտ ավազից | մ³ | 26 | 3.95 | 102.72 |
| 5 | 27-19 | Խողովակի վրայի շերտ ավազից | մ³ | 80 | 3.95 | 316.08 |
| 6 | 1-1635 | Բնահողի հետլիցք մեխանիզմով | 1000մ³ | 0.2031 | 83.13 | 16.88 |
| 7 | 1-1593 | Ավելորդ բնահողի բարձում ինքնաթ.Էքսկավատորով | 1000մ³ | 0.1494 | 724.03 | 108.17 |
| 8 | Գ310-5 | Տեղափոխում 5 կմ | տն | 254 | 1.66 | 422.29 |
| 9 | 22-121 | Պոլիվինիլքլորիդե խողովակ d =160 մմ կոյուղու համար | մ | 375 | 3.83 | 1 436.25 |
| 10 | 27-19 | Ավազե ներքնակ սալի տակ | մ³ | 29.4 | 3.95 | 116.16 |
| 11 | 27-95 | Ճանապարհի բետոնե սալերի մոնտաժում | մ³ | 44.1 | 8.42 | 371.11 |
| 12 | 27-20 | Ճանապարհային ծածկույթի վերականգնում ավազակոպճային խառնուրդով /տոփանումով/20սմ հաստությամբ | մ³ | 14 | 3.6 | 50.41 |
| 13 | 11-6. | Խճի նախաշերտի կառուցում 100մմ | մ³ | 1.65 | 13.52 | 22.31 |
| 14 | 6-2. | Հորի հիմքի և հիմնատակի կառուցում Վ - 7.5 բետոնից | մ³ | 2.75 | 54.98 | 151.19 |
| 15 | 22-446 | Դիտահորի կառուց. հավաք. ե/բ օղակներից | մ³ | 2.64 | 37.47 | 98.91 |
| 16 | Շուկա | Ե/ Բ Դիտահոր 1000 մմ | հատ | 11 | 34.76 | 382.38 |
| 17 | 22-446 | Դիտահորի ծածկ. հավաք. ե/բծածկի էլեմենտ. | մ³ | 1.54 | 37.47 | 57.70 |
| 18 | ինֆ տեղ | Ե/ Բ Կափարիչ 1200*1200 մտոցով | հատ | 11 | 92.69 | 1 019.59 |
| 19 | 22-397 | Միացում գործող կոյուղու դիտահորին | հատ | 1 | 21.03 | 21.03 |
| | | Արտաքին կոյուղի/Այգեստան - 2 / | | | | |
| 1 | 1-58, | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.8838 | 804.24 | 710.79 |
| 2 | 1-965 | Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի | մ³ | 189.8 | 4.8 | 911.37 |
| 3 | 27-19 | Նախապատ. շերտ ավազից | մ³ | 76 | 3.95 | 300.27 |
| 4 | 27-19 | Խողովակի վրայի շերտ ավազից | մ³ | 232 | 3.95 | 916.62 |
| 5 | 1-1635 | Բնահողի հետլիցք մեխանիզմով | 1000մ³ | 0.6052 | 83.13 | 50.31 |
| 6 | 1-1593 | Ավելորդ բնահողի բարձում ինքնաթ.Էքսկավատորով | 1000մ³ | 0.468 | 724.03 | 339.13 |
| 7 | Գ310-5 | Տեղափոխում 5 կմ | տն | 796.3 | 1.66 | 1 323.89 |
| 8 | 22-121 | Պոլիվինիլքլորիդե խողովակ d =160 մմ կոյուղու համար | մ | 989 | 3.83 | 3 787.87 |
| 9 | 22-122 | Պոլիվինիլքլորիդե խողովակ d =200 մմ | մ | 95 | 6.48 | 615.13 |
| | | կոյուղու համար | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | 27-20 | Ճանապարհային ծածկույթի վերականգնում ավազակոպճային խառնուրդով/տոփանումով/20սմ հաստությամբ | մ³ | 160.4 | 3.6 | 577.54 |
| 11 | 11-6. | Խճի նախաշերտի կառուցում 100մմ | մ³ | 4.8 | 13.52 | 64.91 |
| 12 | 6-2. | Հորի հիմքի և հիմնատակի կառուցում Վ - 7.5 բետոնից | մ³ | 8 | 54.98 | 439.82 |
| 13 | 22-446 | Դիտահորի կառուց. հավաք. ե/բ օղակներից | մ³ | 9.6 | 37.47 | 359.68 |
| 14 | Շուկա | Ե/ Բ Դիտահոր 1000 մմ | հատ | 40 | 34.76 | 1 390.46 |
| 15 | 22-446 | Դիտահորի ծածկ. հավաք. ե/բծածկի էլեմենտ. | մ³ | 4.48 | 37.47 | 167.85 |
| 16 | ինֆ տեղ | Ե/ Բ Կափարիչ 1200*1200 մտոցով | հատ | 32 | 92.69 | 2 966.08 |
| 17 | 22-397 | Միացում գործող կոյուղու դիտահորին | հատ | 1 | 21.03 | 21.03 |
| | | **Ընդամենը** | | | | **23 853.81** |
| | | **11 % շահույթ** | | | | **2 623.92** |
| | | **Ընդամենը** | | | | **26 477.72** |
| | | **20 % ԱԱՀ** | | | | **5 295.55** |
| | | **Ընդամենը** | | | | **31 773.27** |
| | | **1,5 % մնացորդային չնախատեսված ծախսեր/տրվում է փաստաթղթային հիմնավորման ժամանակ/** | | | | **476.60** |
| | | **Ընդամենը** | | | | **32 249.87** |

*Կապալառու աշխատանքները կատարում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քրբր Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասեր հասցեում:

Աշխատանքների ֆինանսավորման 25%-ի համար պարտավորությունները կկտարի Սպիտակի համայնքապետարանը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ա. ՋԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ. Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ

ՀՀ Լոռու մարզի
Սպիտակ համայնք
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ
ք. Սպիտակ
Համայնքի ղեկավար

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Բիդեք>> ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
Էլ.փոստ info@bedeck.am
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801
Հեռ. +374 11 57 55 22,
+374 93 10 55 22
Տնօրեն

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*« 13 » փետրվարի 2019թ. կնքված*
*ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆ ԵՎ ԱՅԳԵՍՏԱՆ 2 ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հողային աշխատանքների | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից | 15 |
| 2 | Ավազե ներբնակ | | 15 |
| 3 | Դիտահորերի տեղադրում | | 20 |
| 4 | Հետլիցք | | 10 |
| 5 | Ճանապարհային ծածկույթների վերականգնում | | 5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 40 |
| աշխատանքների առանձին տեսակների օրացուցային գրաֆիկը ներկայացված է նախագծում (կցվում է) | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ս. ՉԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ՀՀ Լոռու մարզի
Սպիտակ համայնք
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ
ք. Սպիտակ
Համայնքի ղեկավար

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Բիդեք>> ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
Էլ.փոստ info@bedeck.am
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801
Հեռ. +37411 57 55 22,
+37493 10 55 22
Տնօրեն

Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

*Հավելված N 3*
*«13» դեկտեմբերի 2019թ. կնքված*
*ԶԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | 45231143/503 | կոյուղիների կառուցման աշխատանքներ | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231143/503 | կոյուղագծերի կառուցման աշխատանքներ - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քերթ Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասերի | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % | % | % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ս. Զաքիկյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Բիդեք>> ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
հեռ.՝ 093 10 55 22
Էլ.փոստ info@bedeck.am
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801
Հեռ. 374 11 57 55 22,
374 93 10 55 22
Տնօրեն

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 13 » փետրվարի 2019թ. կնքված*
*ՁԿ-ԳՀԱՇՁԲ-18/4-Ա ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը _______________
հհ ____________________________
հվհհ __________________________

Պատվիրատու

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը _______________
հհ ____________________________
հվհհ __________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «          » 2019թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 2019թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »     «                    » 2019թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«13» փետրվարի 2019թ. կնքված*
*ԶԿ-ԳՀԱԾՁԲ-18/4-Ա ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 2019թ. ____________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2019թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն